

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը մասնակցեց զինվորների ու նրանց ծնողների հետ հանդիպմանը

Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը հոկտեմբերի 28-ին մասնակցեց ՀՀ զինված ուժերի 3-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Օնիկ Գասպարյանի հանդիպմանը Տավուշի մարզից գորակոչված զինվորների ու նրանց ծնողների հետ: Միջոցառումը բազմամարդ էր, ներկա էին ոչ միայն զինվորներն ու նրանց ծնողները, այլև համայնքների ղեկավարներ, կրթական, մշակութային հաստատությունների, հասարակական ու պետական կառույցների ներկայացուցիչներ: Ողջույնի խոսքով հանդես եկավ Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը, կարևորելով նման հանդիպումները բանակ-հասարակություն կապի ամրապնդման համար: Նշեց, որ հպարտանում է մեր զինվորներով, քանզի շնորհիվ նրանց մեր սահմաններն ամուր ձեռքերում են: Ծնողների անունից խոսք ասաց Վերին Կարմիաղբյուրի գյուղապետ Կամո Չոբանյանը, որի որդին նոյնպես ծառայում է: 3-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Օնիկ Գասպարյանը ողջունեց ու շնորհակալություն հայտնեց զինվորների ծնողներին նախաձեռնությանն արձագանքելու և ներկա գտնվելու համար: Ընդգծեց, որ նրանց որդիները դժվարին, բայց խիստ անհրաժեշտ ծառայություն են իրականացնում, որ բանակը կոփում է տղամարդուն, դարձնում ավելի ինքնուրույն: Կոչ արեց ծնողներին լինել համբերատար և հավաստիացրեց, որ բանակն իր կողմից գործադրում է բոլոր ջանքերը, ստեղծում է բոլոր պայմանները, որպեսզի տղաներն ողջ ու առողջ վերադառնան իրենց տները: Ապա հրամանատարը կարճաժամկետ արձակուրդներով պարգևատրեց մի շարք ժամկետային զինծառայողների, իսկ նրանց ծնողներին՝ շնորհակալագրերով:

Միջոցառումն ուներ նաև մշակութային հատված: 3-րդ բանակային կորպուսի տարեգրությունը ներկայացնող տեսաֆիլմ ցուցադրվեց: Գեղեցիկ կատարումներով հանդես եկան զինվորները և Իջևանի արվեստի դպրոցի պարարվեստի խմբի սաները: